

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ, — «Սայաթ-Նովա», ԳԱ Հրատարակչություն,
1969 թ., 469 էջ

Մեր դրական հասարակայնությանը և ընթերցասեր ժողովրդին շատ լավ հայտնի են Պարույր Սևակի հոգվածները՝ նվիրված նարեկացուն, Սիամանթոյին, Պետրոս Դուրյանին, Թումանյանին և հայ մշակույթի այլ ներկայացուցիչներին, Դրանք կուռ լեզվով ու ոճով դրված ամբողջական ու սպառելի բնութագրություններ են, իրենց բովանդակության խտությամբ, գրելաձևի թարմությամբ՝ կարևոր արժեք են գրականագիտության համար։ Տեղն է ասել, որ խոշոր տաղանդի բանաստեղծը նաև գիտնական է իսկական առումով։ Մեղ քաջ հայտնի է, թե ինչ բնույթի գիտական հոգվածներ ու գրքեր են գրել գրողներն ու արվեստագետները։ Դրանք մեծ մասամբ տպավորություններ ու հաճախ ոչ առարկայական վերլուծումներ են, որոնք ընթերցվում են մեծ մասամբ գեղագիտական հաճույքի համար, թեև կան նաև բացառություններ։ Պարույր Սևակը ստանալով բանասիրական կերթություն, աշխարհում ասպիրանտական դասընթացը՝ մասնագետի բազմակողմանիությամբ դիտել հայ հին ու նոր, ռուս ու համաշխարհային գրականությունն ու ղրականագիտությունը։ Եթե դրան գումարենք նաև բանաստեղծի եզակի ընկալումը, մտքի թռիչքները, ձևակերպումների կուռ ու սպառելի գիտական ամբողջականությունը, գրականագիտական հարցերին մոտենալու թարմ ինքնուրույնությունը և պատկերավոր լեզուն, ապա կպատկերացնենք այս աշխատության գիտական րարձր արժեքը։ Արդարև, մի գործ, որ Սայաթ-Նովայի շուրջը ստեղծված պատկանելի գրականության գլուխգործոցն է։

Պարույր Սևակն առաջարկում է նշում է, որ ինքը մյուս ուսումնասիրողների համեմատությամբ ավելի բարեբախտ վիճակում է գտնվում. նախ Սայաթ-Նովայի մասին հիշյալ պատկանելի գրականությունը գտնվում է իր ձեռքի տակ և երկրորդ ավելի կարևորը, որ թարգմանված են նաև մեծ բանաստեղծի վրացերեն ու ադրբեջաներեն խաղերը, որոնք նկատի չեն առել նախորդ ուսումնասիրողներից շատերը։ Մասամբ սրանով է պայմանավորված սույն աշխատության տարբերությունը նախորդներից,

որոնք ավելի հոգվածագրական, բանաստեղծական, առաջարկային, նաև տոնական բնույթ են կրում և, իբրև այդպիսիք, չէին կարող իրենց մեջ ամփոփել մեծ բանաստեղծի ամբողջական դիմանկարը և չկրել իրենց բնորոշ ինչ-որ անանուն մի դաշվածք։

Սույն աշխատության և նախորդների մյուս, արդեն ոչ առարկայական, տարբերությունն այն է, որ նախորդները հուզել են ավելի բանասիրական, քան գրականագիտական ու արվեստի վերլուծման խնդիրներ, որոնք դարաշրջանի պահանջն ու հնարավորությունը լինելով, անպատճառ անհրաժեշտ էին Սայաթ-Նովայի ժամանակի, անձնավորության, գրադմունքի, սիրո առարկայի, ծննդյան, տարիքի, բնավորության, իր միջավայրի հետ ունեցած փոխհարաբերության և այս կարգի այլ հարցեր ու խնդիրներ պարզարանելու համար։ Եվ, ի պատիվ այդ ուսումնասիրողների, Սայաթ-Նովայի կյանքի շատ առեղծվածներ պարզված են՝ եղել մինչև սույն աշխատության երևան դալը, մի աշխատություն, որ թվում էր թե բանասիրությունը պետք է շրջանցի և նյութ ունենա միայն Սայաթ-Նովայի բանաստեղծության մեծ արվեստն ու վարպետությունը։ Սակայն խոստովանենք, որ Սայաթ-Նովային նվիրված ուսումնասիրությունը չի կարող շրջանցել բանասիրությունը, որ մոտ մեկ ու մի քառորդ դար առնչվել է Սայաթ-Նովայի կյանքին ու գործին։ Այդ ընթացքում մեծ շնքի ամրախարհիս շատ որմեր ու անքանդելի սյուներ են հիմնվել։ Գրախոսվող գրքի հեղինակը ոչ միայն արժանին է հատուցել այդ հաստատուն որմերի ու սյուների վարպետ ճարտարապետներին ու կառուցողներին, այլև դրանց մեջ թուլացած առանձին քարեր ու շաղախներ վերաամրավորել է առանձնակի վարպետությամբ։ Իսկ ինչ վերաբերում է խախտու, ցեխակոլով արված այն կցմցումներին, որոնք անհամատեղելի են Սայաթ-Նովայի ճարտար ուսումնասիրողների Գեորգ Ախվերդյանի, Հովհ. Թումանյանի, Վալերի Բրյուսովի, Գարեգին Լևոնյանի, Գեորգ Ասատուրի, Նիկոլ Աղբալյանի, Մորոս Հասրաթյանի հոյակապ կառույցի հետ, որ կոչ-

վում է սայաթնովագիտություն, ապա բանաստեղծ գիտնականը մուրճի ահեղ հարվածներով անխնա ու հմտորեն փշրում ու մեկուսացնում է այդ ցեխաշարը:

Գրքի առաջին գլուխը խորագրված է «ԾՐբ է ծնվել Սայաթ-Նովան», որտեղ գիտնականը քննում է Սայաթ-Նովայի ծննդյան, մահվան, սիրո առարկայի, պալատից արտաքսման, կրոնավորման և բանաստեղծի կյանքի հետ կապված բաղադրանքային հարցերը Թեկուզ միայն այս գլուխը կարելի է ընթերցողը հիանում է բանաստեղծի բանասիրական մեծ պատրաստության, հարցի բազմակողմանի քաջածանոթության, միմյանց հետ կապվող և միմյանցից բխող պատճառների ու հետևանքների տրամաբանական շղթայավորման ամրակուռ զոգավորման, երևույթների խորքը թափանցելու և այնտեղի նրբին, անտեսանելի կապերը գտնելու ու բացահայտելու, դրանք ընթերցողին շքեղորեն մատուցելու գիտական ունակությունների վրա:

Հաստատելու համար, թե Սայաթ-Նովան ոչ թե ծնվել է 1712, 1717, 1719, 1726 և ուրիշ թվականների, այլ խստորոշ կերպով 1722-ին՝ գիտնականը բերում է 15 այնպիսի ժանրակշիռ փաստարկներ՝ իրենց կողմնակի ճյուղավորումներով ու ներություններով, որ այլևս անհնար է որևէ առարկություն մեջտեղ հանել:

Եվ Պարույր Սևակը պատմական այս ճշմարտության վերհանմանը հասել է ոչ միայն զուտ բանասիրական հետազոտությունների քննությունով: Նա խորամխվել է Սայաթ-Նովայի բարդ բանաստեղծական արվեստի ու ծածկագիր անխմանալի ձևակերպումների բավիղները և դրանցից բխեցրել իր փաստարկումները՝ հարակից մանրամասներով:

Գրքի երկրորդ գլուխը վերնագրված է «Սայաթ-Նովայի ստեղծագործություններ»: Աշխատությունն ուղն ու ծուծը, էանյութը հենց այս գլուխն է. մոտավորապես 250 էջից բաղկացած մի ընդարձակ ուսումնասիրություն, ուր բանաստեղծ գիտնականը ձեռք առաջնորդում է Սայաթ-Նովայի բանաստեղծության աղամանդակուռ պալատի գաղտնարանները և ձեր առջև փռում է դրանց անհուն գեղեցկություններն ու շքեղությունները՝ աննախընթաց վերլուծումներով ու գնահատանքներով:

Գրքի այս մասը սկսվում է Կիպլինգի մի թևավոր խոսքով՝ «Արևելքն Արևելք է, Արևմուտքն՝ Արևմուտք, և սրանք երբեք չեն հանդիպելու»: Այս խոսքը իր ենթարկագրով լույս մեր մոլորակների երկու հակադիր տարածքների զանազանությունն է ցույց տալիս և կարծեք թե ուրիշ ոչինչ այնտեղ չկա, իսկ Պ. Սևակը այդ խոսքի ճշմարտության ժխտման տրամադրությամբ ավել-

ի է խորացնում զանազանությունը, որ առարկայորեն գոյություն ունի և դեռ պետք է ունենա:

Գրքի բանաստեղծական արվեստների սեակյան հանդիպողությունները այդ են ցույց տալիս: Արևմուտքի ու Արևելքի ժողովուրդների տնտեսական, քաղաքական, հասարակական ու իրավական վիճակների խոր տարբերության վերլուծումից հետո: Նա գրում է. «Այդ դարում [18-րդ], դարի մանավանդ առաջին կեսում (որ համապատասխանում է Սայաթ-Նովայի ստեղծագործական կյանքին) բանաստեղծական հատկանիշներից գործում էր միայն մեկը՝ ճանգվաթը: Վախճան, իսկ պոեզիայի տեսակարար շարժառիթը, որ ճեշնջանք է կոչվում, ոչ միայն մոռացվել, այլ իսպառ վառվել էր՝ Ֆրանսիացի Բուալուի և անգլիացի Պոպի օրերից սկսած: Բանաստեղծելիս աշխատում էին մկանները, միջուկն պետք է աշխատեին շղեղով: Գործում էր ուղեղը, միջուկն ճգում մասնակցություն էր հարկավոր: Ոգնշման տեղը գրավել էին դատողությունն ու սրամտությունը, պատկերավորության տեղը բռնել էր պնդազարդ արհեստականությունը, տաղանդի տեղը՝ ստացական գիտելիքը: Ինչքան ուզեք խրատ ու քարոզ, խորհուրդ ու բարոյախոսություն, Որքան սրտենորդ տա՝ չափածո հոստորություն ու հանգավոր հրապարակախոսություն, ցամաք ու երկարաբան նկարագրություններ, լավագույն դեպքում՝ սերոբանական երազկոտություն ու սաղմոսային լավականություն, բայց ոչ ճշմարիտ արվեստի հաճախանք, բայց ոչ հոգու խռովք և ոգու թևարախումբ:

Այս էր արևմուտքը Սայաթ-Նովայի ժամանակ: Իսկ Սայաթ-Նովայի բանաստեղծական արվեստը ստեղծված է հոգու նրբագույն թրթիռներով, արյան ջերմությամբ ու զարկերակների հնչող բաբախումով, ոգու թևաբախումով ու սրտի հոլովումով: Ավելի քան երեք քառորդ դար հետո պետք է արևմուտքում հայտնվեին ծագումով հրեա գերմանացի Հայնե և ռուս գանգրահեր բանաստեղծը, որ հանգավոր չափածո՝ մկանների բանաստեղծությունը դառնար հոգու և ներշնչանքի արվեստ:

Եվ այսպես Պարույր Սևակը Սայաթ-Նովայի մեծ արվեստը քննում է արևմուտքի բանաստեղծական արվեստի բարձր մակարդակով՝ հաճախ առաջնությունը տալով իր տոհմի նահապետին: Սայաթ-Նովան, զուգադրվում է մեծերից մեծի, հանճարների հանճարի՝ Շեքսպիրի հետ: Եվ արդարև «Անլուի զանգակատան» հեղինակը իր սրատես աչքով ու խորիմաստ մտքով ձևի ու բովանդակության զարմանալի նմանություններ է լույս աշխարհ բերում Շեքսպիրի ստեղծանքի և Սայաթ-Նովայի սիրո անմահ աղոթքների մեջ:

Սայաթ-Նովայի արվեստը քննվում է նաև հայ բանաստեղծական արվեստի մակարդակով:

Նա Սայաթ-Նովայի բանաստեղծության ներքնաշխարհի քննությունը սկսում է սիրուց, որը նրա արեալին արվեստի մեծ ու առաջին ճառագայթումն է: Սայաթ-Նովայի արվեստի այս հավիտենական թեման քննել են ուրիշ մեծեր ևս: Առաջին պատիվը պատկանում է մեծ Թումանյանին: Սակայն ասենք, որ Թումանյանը զուգադրելով Նաղաշ Հովնաթանի, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերերը ցույց է տալիս վերջինիս սիրո մի կողմը միայն՝ չվայելած, չճաշակած, դժբախտ սերը: Մեկ ուրիշը, ուսումնասիրելով Սայաթ-Նովայի սերը ավելի մանրամասն, ասում է՝ Սայաթ-Նովայի սերը իրական, ոչ երևակայական, բայց և անպատասխան մնացած սեր է: Դա պատանեկական երազանք և երիտասարդի տենչանք չէ, այլ հասուն մարդու սեր, մարդ, որ ամուսնացած է, ունի զավակներ, բայց բռնված է նոր ու խոր սիրով, որ մահից հզոր է:

Նոր ուսումնասիրության հեղինակը ուշադրության առնելով Սայաթ-Նովայի սիրո այդ հատկանիշները, յուրովի խորացնում է ոչ միայն բանաստեղծի անդամաճան ու անհույս սիրո ընդլայնվելու փնտրանքները, այլև այդ միշտ միևնույն էությունը բանաստեղծին մոխրացնող սիրո բանաստեղծական արտահայտման բազմազանությունն ու բազմաձևությունը, որը ռուս մեծ բանաստեղծ Բրյուսովին իրավունք է տվել ասելու՝ «այլընտրանքի բազմազանություն նմանության մեջ, երանգների քանտեսելով, որի նմանը միայն հանգստեցնելով մեկ հարյուր տարի հետո՝ բնագիտի վերջին անունով»:

Պարույր Սեակը չի բավարարվում մեծ Բրյուսովի այդ զուգադրությամբ. Սայաթ-Նովային բաղդատում է Նարեկացու հետ, որ նույնպես ապշեցուցիչ միանմանությունը երգում է կախարդական բազմազանությամբ և աստծուն հավասարեցնում է սիրո հետ՝ այնպես, ինչպես որ Սայաթ-Նովան սերն է հավասարեցնում աստվածության:

Եվ հենց այստեղ ուսումնասիրողը խորամարտվում է Սայաթ-Նովայի սիրո արտահայտման այդ բազմաշխարհը, պեղում է նրա բանաստեղծության թանկագին աղամանդները ու փնտրում է ընթերցողի առջև իրենց զրականագիտական գնահատությամբ ու արժեքավորումներով, մեծ թանգարանագետի նման ի տես է բանում իր հազվագյուտ ցուցանմուշները և պատմում դրանց ստեղծման ու գյուտի գաղտնիքները, մի բան որ չեն արել Սայաթ-Նովայի սիրո մյուս մեկնաբանները:

Այստեղ էլ իբրև անկողմնակալ գիտնական նա զատում է Սայաթ-Նովայի արվեստի ժա-

մանակավոր ու հավիտենական տարրերը: Այդ ժամանակավոր տարրերից մեկը սիրածի գովքն է, որ ինչքան էլ գեղահոուն է հանճարեղ բանաստեղծի խոսքի մեջ, այնուամենայնիվ, աշուղական է և իր վրա ունի կրկնողության անխուսափելի կնիքը՝ դարաշրջանի բանաստեղծական քարացած ձևերի ու բառապաշարի օգտագործման պարտադրանքը, որ խլում է բանաստեղծի անհատականությունից շատ բան և դառնում է նրա արվեստի երկրորդ թերությունը: Այդքան գովված ու գովերգված գոգալը գոնե իր մարմնական ամբողջական շքեղությամբ չի երևում, բայց դրա փոխարեն նրա երգը համակ սեր է և պաշտամունք ու տենչանք, առանց տոհմաբնի, որովհետև Սայաթ-Նովան ինքը մի բարձր ու մեծ ազնվական հոգի էր, ուր տոհմից սերը չէր կարող այնտեղ ասպնջականություն գտնել: Հակառակ այն բանին, որ Սայաթ-Նովան բոլոր խաղերում գովերգում է ու փառաբանում իր միակ սիրածին և համարյա իր մասին չի խոսում, ուսումնասիրողի հաստատմամբ մենք իրեն ավելի լավ ենք տեսնում, քան նրա սիրուհուն: Այս գաղտնիքը բանաստեղծի անկեղծության մեջ է պահված և բացահայտվում է հենց այդ ազնվական անկեղծությամբ, մի բան, որ ոչ միայն պայծառորեն նրան երկնազրում է մեր տեսողության ու մտքի առջև, այլ երկու հարյուր տարվա հեռավորությունից ավելացող թարմությամբ խոսում է մեզ հետ և դեռ շատ երկար պիտի խոսի:

Պ. Սեակն իր վերլուծումները չի կատարում սոսկ հիացողի տարվածությամբ, բացելով երկու հարյուր տարվա ժամանակի և Թիֆլիսի բարբառի թանձր վարագույրը Սայաթ-Նովայի երգերի վրայից՝ քննարկում է այն ամեն երեւելիները, որոնք բանաստեղծության նյութն ու թեման են կազմում. հրեթացս այդ ամենի ասվում է, որ Սայաթ-Նովայի երգերի մեջ ընդունված աղքատ է, և աղքատիկն էլ անկենդան է, մի բան, որ իրականություն է: Եվ այդ երեւելիների պատճառների ի՞նչ մանրամասնություններ է մեզ մատուցում բանաստեղծ ուսումնասիրողը. քննում է դարաշրջանի արվեստը, աշուղական արվեստի առանձնահատկությունները, ձևն ու բովանդակությունը, որոնք ընդունված համար տեղ չեն ունեցել: Սակայն մեզ թվում է, որ ուսումնասիրության վերջին փաստարկն է այն պատճառը, որ Սայաթ-Նովայի խաղերում ընդունված տեղ չունի, կամ եթե կա ինչ-որ բան, մեր ուզածը չէ: Սայաթ-Նովան որքան որ աշուղ է, տասն անգամ ավելի բանաստեղծ է, նա չէր կարող անտարբեր լինել ընդունված հանդեպ, սակայն նրա դժբախտ սերը սիրտ չի թողել ընդունված վայելքը ներապրելու, նրա կենդանի շընչառությունը իր մեծ շնչին խառնելու համար:

Այստեղից էլ հենց պակասը կամ չգոյությունը այն խաղերի, որոնք կոչվում են խնջույքի ու զվարճության խաղեր, և սրանց տեղը լիովին լցնում են դադիք բլրակի սիրո ողբերը, աղեկտուր ճիւղերը և աշխարհի անօրհույս քաղաքները, մի աշխարհ, որտեղ

Վուրեն ախկատ, վուրեն՝ օսկով մե զանգին,
Վուրեն գինի, վուրեն աղու մե բանգի.
Մեկը կոծ է սազ, էն մեկն էլ՝ իր շանգին.
Մեկին դամ ու վայելք, մեկին՝ ցավ ու սուք.

Սայաթ-Նովան իբրև սիրո երգիչ ու խալիսի ճոփա, եթե մի աղերսանքով մեծ Մեծարենցին թելադրում է Տուր ինձի, անհ, ուրախությունն անհանձնելու և վարժական թելադրում է, թի ինքը Անապատն է իր ծառայակ մեկ բույսով, այդ և կողմից ձայնակցում է Ֆրիկին՝ միշտ դարձ մեր սոցիալական անարդարության բողոքարկուն՝ ասելով նաև

Ի՞նչ իմանաս՝ ո՞վ կու դատե, ո՞վ կուտե,
Տիրոջ բանեն գլուխ հանիլ կուլի՞ վուր:

Երբ՝ Հեթիմ ու դատաստան չըկա, մե դըրուտ աղալաթ չկա:

Եվ այս համատարած շարունակյալ ու արյան ծովի մեջ վեհորեն մեր առջև է հանվում ճակատը պայծառ, արի ու բարի, աղոթքն ու օրհանգրվելովի վրա մեծ մարդասերը՝ ժողովրդասերը, որը չի վարանում իր շրթերը պղծել անեծքով, երբ խոսում է անարդարության, անարդարների, խալիսի ստի ու կեղծիքի դեմ: Հենց այստեղից էլ սկսում եք սուգվել գրախոսվող գրքի հասարակական-գաղափարական վերլուծումների աշխարհը, մի աշխարհ, ուր ձեզ առաջնորդում է բանաստեղծ-ուսումնասիրողը՝ բացահայտելով այդ աշխարհը ոչ թե իմացապաշտական դատողություններով, այլ Սայաթ-Նովայի ստեղծագործության նյութը խորալստիկ լով և ցուցադրելով: Եվ մենք, որ Սայաթ-Նովայի խաղերը կարդում և երգերը լսում ու վայելում ենք՝ միայն մտածելով, որ նա մի մեծ սիրերգի է, այս գիրքը կարդալով համոզվում ենք, որ այդ սիրերգակը պայքարի առաջամարտիկ բանաստեղծ է, որի մեծ սրտի ուղիղ մեջտեղով անցնում է աշխարհի անկարկատելի խոր ճեղքվածքը և նա էլ Դանեմարքայի մեծ ազատասերի նման կարող էր բացակայել Մաշխարհը դուրս է սայթաքել իր շավիղից և եթե չի ասում ժմի՞թե ես պիտի ուղղեմ, որովհետև Դանեմարքայի մեծ իշխանի իրավունքները չունեն, վրիժառության գալարում բոցով չէր տապակվում: Ինչելով համակ արժանապատվու-

թյուն, վեհ հպարտություն, ընդվզող մեծ հոգի, այնուամենայնիվ, իրեն մեղավոր էր զգում՝ իր արդար սիրո, ժողովրդին ծառայելու, նրա կողմը բռնելու և բեղասլաններին խարանելու մեծ առաքելության մեջ:

Եվ Պարույր Սևակը բանաստեղծի լքված ու անկյալ համատարած բեռնային խավարի մեջ նետվածի հոգեվիճակը ինչ սարսուղացիկ գույներով է ներկայացնում ընթերցողին՝ բանաստեղծի այդ շրջանի հատուկ նյութ տողերից, ավանդաբար մնացած արտահայտություններից քաղելով փաստեր ու օրինակներ:

Ուսումնասիրողը իր գրքի հիմնական մասը ավարտում է Սայաթ-Նովայի արվեստի հավիտենական թարմության գաղտնիքների վերլուծումներով ու բացահայտություններով:

Գրքի վերջին գլուխը վերնագրված է ԵՄանուիլ թարգմանություններ, որտեղ ուսումնասիրողը ծավալվում է Սայաթ-Նովայի ստեղծագործության հետ կապված բանասիրական ու գրաքննադատական տեսությունների բնագավառում: Քառասուն ծանոթագրություններից միայն մեկը՝ 3-րդը կարդացեք և տեսեք, թե ինչ խոր գիտակցություն է հանդես բերում Պարույր Սևակը Սայաթ-Նովայի ստեղծագործության, և որքան է անխնա նրանց հանդեպ, որոնք թեթև ու տոնական օրերին տուրք տալու հոգացողությանը են միայն ձեռնարկում բանաստեղծի ստեղծագործությանը: Վերջացնելուց առաջ կուգինք մի երկու դիտողություն անել: Ամենից առաջ ասենք, որ այս գիրքը չի գրված միայն մի եղ շրջանի համար: Սրանից օգտվելու է մեր ուսուցչությունը, ուսանողությունը և նույնիսկ ընթերցասեր հասարակությունը: Արդյոք լավ չէ՞ր լինի, եթե հեղինակը գրքի հիմնական մասը (II գլուխը) շարադրեր հատուկ վերնագրերով: Այս դեպքում մեզ թվում է, թե ընթերցողն ավելի հեշտությամբ կկոդմնորոշվեր:

Սայաթ-Նովայի ռոման էն գրելսեն իմաստուն-իս խաղը համարվում է բանաստեղծի դիմումը Հերակլ արքային: Այս ենթադրության առաջին հեղինակը Գ. Ասատուրն է: Սրա դեմ եղել են լուրջ առարկություններ, բայց, դժբախտաբար, այս գրքում այդ մասին որևէ խոսք չկա, ընդհակառակը Պ. Սևակը նույնպես դա ճշմարտություն է համարում: Մինչդեռ մենք ևս հակված ենք կարծելու, որ դա ուղղված է իր սիրելի Աննային: Բողոքներ ծեծված զգալի հարցը: Եթե Սայաթ-Նովան Հերակլին է դիմել, ինչու՞ պետք է ասեր:

Ցիս խոմ էն գրելսեն էրած իմ, նուրմեկանց քաբար մի՞ անի,

Թե վուր գիդիմ բեզարիլ իս, ուրիշին սաբար մի՞ անի:

Հերակլին իր էրված լինելը ինչու՞ պետք է

մատնացույց աներ բանաստեղծը, Եվ Հետո ի՞նչ է նշանակում բեզարիլ իս. Հերակլը չէր կանչել և բանաստեղծին ասել, թե քեզ պալատից դուրս չ'անելու, որ բանաստեղծն էլ պատասխաներ, բեզարիլ իս, այսինքն՝ ձանձրացել ես ինձի, Ավելի զորավոր փաստ է այդ վարկածի հետ նաև հաշորդ արտահայտությունը: Ի՞նչ կնշանակի ուրիշին սաքար մի անի: Հերակլը եթե պիտի պատժեր բանաստեղծին, ուրիշին ինչո՞ւ պետք է պատճառ բռներ: Ծիշտ է նկատված, որ այդ ուրիշին բառը բանաստեղծը ակնարկում է ոչ այլ ոքի, քան հենց իրեն: Մեզինք ամեն մեկն էլ հայեցի արտահայտությամբ իր ընկերուհուն՝ կամ ընկերոջը կոչման ճիշտ այդպես, ինքի շնո՞ւ ուզում, կամ ինքի ձանձրացել ես, ուրիշին (այսինքն՝ ինձ) ես պատճառ բռնում:

Եթե ընդունենք, որ իսկապես այս բանաստեղծությունը ուղղված է Հերակլին, ապա պետք համարենք, որ Սայաթ-Նովան Հերակլին խոստովանում է իր հանցանքը, որովհետև երկրորդ քառատողի երրորդ տողում ասված է.

Թե էսանց էլ սուշ ունենամ՝ գլուխս արատալ, թաքավոր:

Այսինքն՝ այսուհետև էլ եթե հանցանք գործեմ, գլուխս կտրիր: Կարող են այստեղ ասել, որ հանցանքը վերաբերում էր ոչ թե իր սիրուն, այլ սոսկ լեզվին: Ընդունենք, որ այս այսպես է: Այն ժամանակ ինչո՞ւ պետք է բանաստեղծին իրեն յադալու համարեր Հերակլի առջև, երբ գտնում էր, որ ինքը հանցանք է գործել և երկրորդ անգամ այդ չի կրկնվի: Երրորդ տան երրորդ տողում ասված է.

Դու՛ Բու՛ սիրտըն իստակ պանե, յադի խոսկըն ավալալու չէ:

Այսպիսի խոսքով երբեք բանաստեղծը չէր կարող Հերակլին դիմել: Դուրս է գալիս, որ կիսաճորտ բանաստեղծը իրեն ավելի մոտ է համարում Հերակլին, քան նրա հետ նստող-կանգնող և նրա ականջին փսփացող պալատականներին: Ավելին, բանաստեղծը չէր կարող այդքան աղաչանք-պաղատանքներից հետո սպառնալ, թե

Բունիաթըս ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկերեն է:

Այսպես խոսում են միայն սիրածի հետ՝ չսիրված կամ մերժված լինելով: Մեր խորին համոզումով բանաստեղծությունը ոչ մի կապ չունի Հերակլի հետ:

Մի այլ դիտողություն.

Ուսումնասիրության վերջին մասում իբրեք բնարան բերվում է Սայաթ-Նովայի այն ինքնաձև տաճ խոսքը, որ քամանչային է ուղղված.

Քիզ ինձնից ո՞վ կանա խըլի, աշուղի բա՛սն իս, քամանչա՛:

Գիրքը կարդացողը կգա այն համոզման, թե Սայաթ-Նովան այնքան ինքնավստահ էր, որ կարծում էր, թե թագավորներն անդամ իրենից չեն կարող խել քամանչան: Նկատված է, որ դա միայն վերաբերում է մրցումներին, երբ պարտված աշուղը իր նվագարանը հանձնում է հաղթողին: Սայաթ-Նովան այդ տողով ակնարկում է իր վարպետությունը, այսինքն՝ ոչ մեկ աշուղ մրցման մեջ չի կարող իր քամանչան խել:

Սայաթ-Նովան XVIII դարի բանաստեղծ է. շատ ավելի ամբողջական կլինեիր Սայաթ-Նովայի բանաստեղծական կերպարը, եթե նա ուսումնասիրվեր XVIII դարի հողի վրա, դրական այն միջավայրում, երբ ինքն էր գործում: Սայաթ-Նովան առհասարակ ուսումնասիրված է իր դարաշրջանից մեկուսացած: Երևի նկատի է առնված, որ նա կտրված է եղել հայ գրական կյանքից: Ծիշտ է, հայ գրական կյանք իսկական առումով չի եղել, բայց այդ դարում եղել են բանաստեղծներ, աշուղներ, տարբեր տիպի գրողներ, հրատարակվել են գրքեր ու բանաստեղծություններ ժողովածուներ: Ինչպես ցույց են տալիս փաստերը, մեր բանաստեղծը գրքի հետ կապված մարդ է եղել և, անկարելի էր, որ նա ծանոթ չլիներ դարաշրջանի գրական անցուդարձին: Այս գրքում, ահա, չեն ուսումնասիրված հիշյալ անցուդարձերը և Սայաթ-Նովայի կապը իր ժամանակի գրականության հետ, մի բան, որ նորություն լինելով սայաթնովագիտության մեջ, կամբողջացներ բանաստեղծի գիտական ուսումնասիրության գործը:

Մեր մի ցանկությունն էլ այն է, որ այս գիտական բարձրագույն գրքում ուսումնասիրված տեսնեինք Սայաթ-Նովայի տաղաչափությունն ու նրա բանաստեղծության ձևական կառույցների վարպետությունը:

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵՆՅԱՆ